«ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ի թիվ ՍՆԴ/3723/04/22 սնանկության գործով աճուրդի (կրկնաճուրդի) կազմակերպման և անցկացման մասին

«ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ի թիվ ՍՆԴ/3723/04/22 սնանկության գործով «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի 17.06.2026թ-ին՝ ժամը 12:00-ին, հայտարարված կրկնաճուրդը չի կայացել հայտ չլինելու պատճառով:

08.07.2026թ-ին՝ ժամը 12:00-ին, «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ի թիվ ՍՆԴ/3723/04/22 սնանկության գործով կառավարիչ (աճուրդի կազմակերպիչ) Վարդևան Պետրոսյանի կողմից ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 59/9շ., 3-րդ հարկ 4-րդ սենյակ հասցեում կանցկացվի «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի բաց դասական (գնի ավելացման) եղանակով կրկնաճուրդ՝ նախորդ՝ չկայացած կրկնաճուրդի գնից 20% նվազեցված արժեքով: Կրկնաճուրդի է ներկայացվում «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ին սեփականություն իրավունքով պատկանող հետևյալ գույքը՝

ԼՈՏ 1 IVECO մակնիշի 35S տիպարի, 506SL63 հաշվառման համարանիշով, ACFA6590002350011 նույնականացման համարով, 1987թ. թողարկման տարեթվի ավտոաշտարակ, որն իրենից ներկայացնում է հետևյալը՝ շարժիչը անսարք վիճակում, շարժիչի աշխատանքը ապահովող որոշ դետալներ բացակայում են, ամբարձիչ համակարգը ևս անսարք, ոչ լրակազմ վիճակում, թափքը վատ վիճակում, առկա են վնասված կոռոզիային ենթարկված հատվածներ, թափքը ենթակա է կապիտալ վերանորոգման, անվադողերը և անվահեծերը վատ վիճակում, ենթակա են փոխարինման, սրահը վատ վիճակում, առկա են մաշված պատռված հատվածներ, փոխանցման տուփի հնարավոր թերությունների հայտնաբերման կամ ախտորոշման համար անհրաժեշտ է առավել նեղ մասնագիտական փորձաքննություն և հետազոտություն: Ավտոաշտարակի ընդհանուր վիճակը գնահատվում է վատ:

Լոտ 1-ի մեկնարկային գինն է 74,591 ՀՀ դրամ:

Աճուրդն անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» հրամանով սահմանված կարգով (հրամանը կցված է): Նշված ենթաօրենսդրական ակտը՝ հրամանը, հանդիսանում է նաև աճուրդի անցկացման կանոնակարգը: Աճուրդին (կրկնաճուրդին) մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 01.07.2026թ. ժամը 18:00 ներառյալ կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ՀՀ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով: Հայտի բովանդակությունը և ներկայացմանն առնչվող հարցերը կարգավորվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով: Աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվելու են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:

Հայտին կից պետք է ներկայացվեն ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճեն, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը: Աճուրդի մասնակցության վճարը կազմում է լոտի գնի 1%-ը, բայց ոչ ավել քան 200,000.00 ՀՀ դրամ, իսկ նախավճարը կազմում է լոտի գնի 5%-ը: Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը պետք է վճարվեն մինչև աճուրդի հայտ ներկայացնելը «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ի անվամբ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված թիվ 1150020458688647

սնանկության հատուկ հաշվին՝ որպես ստացող նշելով պարտապանին:
Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդում հաղթողը գույքի գնման գինը վճարում է արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը, իսկ եթե նշված ժամկետում կառավարչի՝ որպես վաճառողի, աճուրդի հաղթողի՝ որպես գնորդի (գրավատուի) և այլ անձի՝ որպես գրավառուի, միջև կնքվում է առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագիր, ապա այդ պայմանագրով գույքի վաճառքի գնի վճարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 5 աշխատանքային օր: Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ներառյալ ՀՀ արդարադատության նախարարի գրավոր հանձնարարությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչները: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք, բացառությամբ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են մուտքի վճար 10,000.00 ՀՀ դրամ «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ի անվամբ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված սնանկության հատուկ հաշվին՝ 1150020458688647: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդին ներկա գտնվելու համար սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 01.07.2026թ. ներառյալ ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 59/9շ., 3-րդ հարկ 4-րդ սենյակ հասցեին կամ vardevanpetrosyan@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում են ծանուցում աճուրդին ներկա գտնվելու ցանկության մասին՝ նշելով ներկա գտնվելու ցանկություն ունեցող անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը և առկայության դեպքում էլեկտրոնային փոստի հասցեն: Ծանուցմանը կցվում են անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև մուտքի վճարի վճարումը վերը նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հավաստող անդորրագիրը:
Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Լոտերը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 01.07.2026թ. ներառյալ, աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում, նախապես պայմանավորվելով «ՍՊԱՌՇԻՆԱՐԴ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Վարդևան Պետրոսյանի հետ: Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցերով կարող եք զանգահարել 095 590-777 հեռախոսահամարով: